'ի վերայ գերեզմանի Թադաւորաց, ելանել անտի 'ի Գողգոթայ. զառաջին աստիճանս խափանեալ, արարին ջրմուղ։ Զ Գողգոթայն և զՏարածման տեղին երկարեցին 2 կանգուն դէպ 'ի Պատանատեղն, և 'ի մէջ սորա բացին կրկին դրունսը. զսենեակս Գողգոթային խառնեալ ընդ կոչնակատեղւոյն՝ երկար դարպաս արարին, և 'ի մէջ սորա բացին կրկին դրունս։ Ի ներքս զհին սեղանատունն Նորոգեցին և զմի սենեակ չինեցին, նոյնպէս և զվերին յարկս սոցին յարդարեցին՝ ընդարձակեցին զՓոխանորդարանն առեալ տեղի 'ի Ղպթոց. մերձ 'ի խորանն Փուշ պսակի բացին մի դուռն։ Փուշ պսակի, Ղունկիանոսի և Հանդերձ բաժանման խորանաց վանդակս (տրապիզին) քարեայ արարին, զի յառաջագոյն փայտեայ էր. զսեղանն Հանդերձ բաժանման այլանդակ չինեցին. 'ի մէջ Ղունկիանոսի և Հանդերձ բաժանման խորանաց բացին դուռն, եւ 'ի վիճակէ Ղպթոց գողացեալ տեղի 1 խուց արարին, և զդուռն գանձատան որ էր 'ի կողմն Բանտին, փոխեցին մերձ 'ի Ղունկիանոսի խորանն. զմի մասն Բանտին կամարաւ հաղորդեցին մերձ 'ի Ղունկիանոսն, 2 կանգուն բարձր. 'ի վերայ սորա 2 մեծ սենեակ. զկամարն կոչնակատեղւոյն 1 կանգուն երկարեցին 'ի կողմն Փուշ պսակի. և զտաճարն իւրեանց յերկայնութեան յերկուց կողմանց 4 և 'ի լայնութեան 1 կանգուն ընդարձակեցին, և կողմնակի զերկոսին պարիսպսն կրկնակի բարձրացուցին, և զյետինն 1 կանգուն, և 'ի տեղի երկաթի վանդակաց 'ի կողմն Գերեզմանին 'ի քարէ չինեցին բարձր քան զառաջին. զխաչկալն կրկնապատիկ բարձր, և զայլ տեղիսն տաճարին դեղեցկութեամբ զարդարեցին։ Ի շրջապատս կաթուղիկէին երկաթեայ վանդակս արարին, նոյնպէս 'ի շրջապատս տաճարին իւրեանց կրկնակի։ զՍուրբ Գերեզմանն յերկայն 2, 'ի լայն 1, և 'ի բարձր 2, զիոքր կաթուղիկէն կրկին բարձր. զՍ. Գերեզմանն ցած, և 'ի տեղի առաջին պատկերի՝ մարմարիոն երեւոյթ ինչ կանգնեցին, և 'ի խաղնէ անուանեալ տեղին փոքր կաթուղիկէ 12 մարմարիոն սեամբ, և մասն ինչ 'ի կեդրոնի ուր կանգնեալ էր Հրեշտակն, որ այժմ ասի Հրեշտակի վէմ. զբոլոր կերտեալ հին քարինս Գերեզմանին ներքոյ և արտաքոյ բարձին, և զմեծ գմբեթն քան զառաջինն բարձրացուցին,